

«Կենսաբոշակային բացատրական բառարանի» ստեղծման և հրատարակման գաղափարն իմքնին ողջումելի և արդիական է: Աշխատանքը, անկատկած կունեա իր մերրուղի, լրացնի որոտի վերաբերյալ ուսումնամերուական գրականության մեջ առկա բացը:

-Աշխատանքի և տցիասական հարցերի նախարարության, Աշխատանքի և տցիասական հետազոտությունների ազգային ինստիտուտ -

Կարծում ենք, որ «Կենսաբոշակային բացատրական բառարան» անհրաժեշտ բայլ է հանրային գիտացրույթի և բարձրացնան հարցում: Այս հնարավորությունն կուտա ՀՀ-ում կենսաբոշակային բարեփոխումների իմքացքի լուսաբանումը և մերկացնուք ավելի արդունավետ դարձնելու և տերմինների հասկանալիության յուշընթուրը վերացնելու:

-ՀՀ Կենտրոնական բանկ-

Կարծորենով «Կենսաբոշակային բացատրական բառարան» հրատարակումը, ցանկանում ենք մեր դրական գնահատականը հայտնել կատարված լայնօճակա աշխատանքի վերաբերյալ և ողջունել նմանատիպ բառարանի կազման հայտագործությունը:

-Հայ-Եվրոպական տնտեսական բարեփոխության և իրավական խորհրդառնության կենտրոն (ԱԵՊԼԱԿ) -

## Pension Glossary

Կենսաբոշակային բացատրական բառարան



# Կենսաբոշակային բացատրական բառարան

## Pension Glossary



**Կենսաքողակային բացատրական  
բառարան**

ՀՏԴ 36 (038)  
ԳՄԴ 65. 9(2)27 ց 2  
Ս 259

**Սարգսյան Արա և այլք,**

**Ս 259 Կենսաբոշակային բացատրական բառարան / Արա Սարգսյան, Ռուբեն  
Մարկոսյան, Արման Ուդումյան.- Եր.: Բավիղ, 2007 - 80 էջ**

Բառարանը միտված է նպաստելու կենսաբոշակային տարբեր եզրերի վերաբերյալ միանման ընկալմանն ու մեկնաբանմանը: Բառարանում տեղ գտած տերմինների մեկնաբանությունը հեղինակներին է և այն կարող է չհամընկնել ՀՀ ՍՍՊՀ պաշտոնական տեսակետի հետ:

Տպագրվել է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի պատվերով՝ Հանաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի շրջանակներում:

**Sargsyan Ara and others.**

**Pension Glossary / Ara Sargsyan, Ruben Markosyan, Arman Udumyan, Yerevan,  
Bavigh, 2007 – 80 pages**

The Pension glossary is an attempt to promote the mutual understanding among pension reformers in Armenia on professiol level and the public in general, with major objective to create comfort on understanding level. The views expressed are those of the authors and do not necessarily represent the official views of State Social Insurance Fund of Armenia.

The Pension Glossary has been published by State Social Insurance Fund of Armenia within the funding framework of the World Bank Social Protection Administration Program.

<http://www.sif.am/glossary>

---

ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ  
Նալբանդյան 13, 0010, Երևան, ՀՀ

www.sif.am info@sif.am

ԳՄԴ 65.9 (2)27 ց2

© ՀՀ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ 2007

© State Social Insurance Fund of the Republic of Armenia, 2007

ISBN 978-99941-985-9-7



## ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունում ներկայում են կենսաբռշակային բարեփոխումներ, որոնց նպատակն է ձևավորել ֆինանսապես կայուն, սոցիալապես արդար և միջազգային չափանիշներին համապատասխան կենսունակ կենսաբռշակային համակարգ: ՀՀ կառավարության կողմից 2006թ. մայիսի 26-ին հաստատվել է կենսաբռշակային ապահովության համակարգի բարեփոխումների հայեցակարգը, որով սահմանվում է նոր կենսաբռշակային համակարգի նկարագիրը, բարեփոխումների շրջանակները, պարտադիր և կամավոր կուտակային համակարգերը, ինչպես նաև վերջիններիս հետ առնչվող մի շարք խնդիրների լուծման մոտեցումները: Այդուհանդեռձ հարկ է նշել, որ կենսաբռշակային բարեփոխումների գործընթոցը պահանջում է տևական ժամանակ, որի ընթացքում, ինչպես վկայում է միջազգային փորձը վերանայման կամ ճշգրտման են ենթարկվում մշակված համակարգի տարրեր բաղադրիչներ:

Բարեփոխումների ընթացքում կարևորվում է նաև միջազգային առաջատար փորձի, այլ երկրներում ներդրված կուտակային և այլ մեխանիզմների ուսումնասիրումը: Այսպիսով ներդրվում է հանրապետության համար միանգամայն նոր համակարգ և բարեփոխվող կենսաբռշակային համակարգին վերաբերվող տերմինների հնարավորինս միասնական ընկալումը ունի կարևոր և արդյունակ նշանակություն:

Կարծում եմ՝ «Կենսաբռշակային բացատրական բառարանը» օգտակար կլինի ոչ միայն մասնագետների՝ այլ նաև կենսաբռշակային և սոցիալական ապահովագրության բնագավառում փորձ չունեցող անձանց համար, կնպաստի ոլորտում առկա խնդիրների լուսաբանմանը, բարեփոխումների ընթացքում տեղական և միջազգային մասնագետների և սոցիալական ապահովագրության խնդիրներով գրադարձ փորձագետների մոտեցումների առավել բարձր փոխընկալմանը:

ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի կողմից մշակված «Կենսաբռշակային բացատրական բառարանը» փորձ է լրացնելու այս ոլորտում առկա մասնագիտական և մեթոդական գրականության բացը:

Վազգեն Խաչիկյան  
ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի  
պետական հիմնադրամի նախագահ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կենսաթոշակային բացատրական բառարանը» ներառում է ավելի քան 280 եզր, որոնք վերաբերվում են կենսաթոշակային ոլորտին առնչվող բազմաթիվ հարցերին: Տերմինները ներկայացված են ըստ այրբենական կարգի հայերեն՝ անգլերեն թարգմանությամբ, որին հաջորդում է տվյալ եզրի հայերեն բացատրությունը: Ըստ անհրաժշտության բերված են նաև հարակից հասկացությունները: Բառարանի վերջում ներկայացված է անգլերեն հասկացությունների ցանկը՝ այրբենական կարգով, որը հեշտացնում է տերմինների որոնումը բառարանում (բառարանի էլեկտրոնային տարբերակն էլ ավելի է հեշտացնում հետաքրքրող տերմինի որոնումը, որը կարելի է գտնել ՀՀ ՍՍՊՀ էլ. կայքում):

Բառարանի ստեղծման ընթացքում ուսումնասիրվել են այլ համանման բառարանները (անգլերեն, ռուսերեն), տարբեր հրապարակումներում, գրքերում, ամսագրերի հոդվածներում տեղ գտած տերմիններն ու հասկացությունները: Այդ հասկացություններից շատերը լայնորեն կիրառվում են արտերկրոս կուտակային և կամավոր կենսաթոշակային սխեմաների իրականացման գործընթացներում, սակայն տեղական մասնագետների համար դեռևս գոյություն ունի դրանց ոչ միանշանակ մեկնաբանման խնդիրը:

Սույն բառարանը սկզբունքային այլ հիմքեր է նախապատրաստում կենսաթոշակային ոլորտում առկա մոտեցումների հստակեցման, աջակցում է բարեփոխումներին դինամիկ ընթացք հաղորդելու գործում՝ միաժամանակ շիավակնելով արձարձված հարցերին միանշանակ և սպառիչ մեկնաբանություն տալուն:

Բառարանի կազմման ընթացքում հաշվի են առնվել բոլոր դիտողություններն ու առաջարկները, որոնք արվել են դեռ բառարանի վերաբերյալ նախնական եզրակացության ժամանակ:

Բառարանի հեղինակները իրենց շնորհակալությունն են հայտնում ՀՀ ՍՍՊՀ իրենց գործընկերներին և բառարանով հետաքրքրված այլ կազմակերպությունների մասնագետներին ցուցաբերած աջակցության համար:

# Ա

## Ածանցյալ *Derivative*

- Արժեքուղթ, որի գինը կախված է կամ ածանցվում է մեկ այլ ակտիվի կամ ակտիվների խմբի գնից (օր. օպցիոն, ֆորվարդ, ֆյուչեր) Այս ֆինանսական գործիքներն ըստ պայմանագրի կետերի, ինչ-որ բան գնելու կամ վաճառելու համաձայնագրեր են:
- Ածանցյալ պայմանագիր է համարվում ներդրողի իրավունքների կամ պարտավորությունների ժամկետային իրականացման (կատարման) իրավունքը կամ պարտավորությունը հավաստող փաստաթուղթը:

## Ակտիվներ *Assets*

Անհատին կամ կազմակերպությանը պատկանող տնտեսական արժեք ներկայացնող ռեսուրս: Ակտիվները լինում են ֆինանսական և ոչ ֆինանսական: Հարակից հասկացություններ՝ Կենսաքոշակային ակտիվներ:

## Ակտիվի լիկվիդայնություն/իրացվելիություն *Asset liquidity*

- Սունց զգալի միջնորդավճարների և ժամանակի կորստի ակտիվի կանխիկի վերածման հատկություն:
- Այն սահունությունն ու արագությունը, որով ակտիվները կարող են փոխարկվել կանխիկի:

## Ակտիվների տեղաբաշխում *Asset allocation*

- Ներդրումային տարբեր գործիքների մեջ կենսաքոշակային հիմնադրամի ակտիվների տեղաբաշխում:
- Տարբեր ակտվիներում ներդրումներ կատարելու ծրագրում և իրականացում:

## Ակտիվների կառավարում *Asset management*

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների կառավարումն ըստ որդեգրած ուղղմավարության:

Հարակից հասկացություններ՝  
Ակտիվների կառավարիչ:

**Ակտիվների կառավարիչ  
*Asset manager***

Ակտիվներ կառավարելու  
արտոնագիր ունեցող անձ  
(կազմակերպություն):

Ակտիվների կառավարիչները  
նույնականացնելու  
ներդրումային  
ուսումնակարություն  
կենսաթոշակային  
հիմնադրամի համար:

**Ակտիվ մասնակից  
*Active member***

Կենսաթոշակային ծրագրի  
մասնակից, որը ներդրումներ է  
կատարում կենսաթոշակային  
հիմնադրամում (և/կամ ում  
անունից կատարվում են  
ներդրումները):

Հարակից հասկացություններ՝  
Կենսաթոշակային ծրագրի  
մասնակից:

**Ակտուար *Actuary***

1. Համապատասխան  
որակավորում ունեցող անձ,  
որը մաքատիկական,

վիճակագրական և այլ  
մեթոդների կիրառմամբ  
գնահատում է որոշակի  
իրադարձությունների տեղի  
ունենալու

հավանականությունը և  
հաշվարկում  
ապահովագրական  
վճարների, պահուածների,  
շահաբաժնների, ինչպես  
նաև ապահովագրական  
հատուցման, կենսաթոշակի և  
անուխետների չափերը:

2. Փորձառու վիճակագիր, որն  
աշխատում է  
ապահովագրական  
ընկերությունում՝  
կանխատեսումներ անելով  
մարդկանց կյանքի  
տևողության վերաբերյալ՝  
հիմնվելով վերջիններիս  
առողջության պատմության և  
ներկայացված այլ տվյալների  
վրա:

**Ակտուարական աճ *Actuarial  
increase***

Ակտուարական  
կանխատեսումների հիման  
վրա հաշվարկված հավելյալ  
գումար օրենքով սահմանված  
կենսաթոշակային տարիքից

ուշ թոշակի անցած անձանց համար:

**Ակտուարական ավելցուկ**  
*Actuarial surplus*

Իրավիճակ, երբ  
ակտուարական  
պարտավորություններն ավելի  
քիչ են, քան կենսաթոշակային  
հիմնադրամի ակտիվների  
ակտուարական արժեքը:  
Ակտուարական ավելցուկն,  
ըստ Էռիթյան, այդ երկուսի  
միջև տարբերությունն է:  
Հարակից հասկացություններ՝  
Ակտուարական պակասուրդ,  
Ակտուարական գնահատում:

**Ակտուարական արժեք**  
*Actuarial value*

Ակտուարի կողմից  
հաշվարկվող կամ  
առաջարկվող արժեք:

**Ակտուարական գնահատում**  
*Actuarial valuation*

Ակտուարի կողմից  
կենսաթոշակային  
հիմնադրամի  
վճարունակությունը ստուգելու  
համար պարբերաբար

(սովորաբար՝ երեք տարին  
մեկ) կատարվող գնահատում:  
Հարակից հասկացություններ՝  
Ակտուարական պակասուրդ,  
Ակտուարական ավելցուկ:

**Ակտուարական  
կանխատեսումներ** *Actuarial assumptions*

Կանխատեսումներ (ներառյալ  
ենթադրություններ  
երկարակեցության,  
աշխատավարձի, սղաճի,  
ակտիվների  
եկամտաբերության և այլնի  
վերաբերյալ), որոնք  
ակտուարը կատարում է  
ակտուարական  
գնահատականների հիման  
վրա:  
Հարակից հասկացություններ՝  
Ակտուար, Ակտուարական  
գնահատում:

**Ակտուարական  
հաշվարկներ**  
*Actuarial calculations*

Ապահովագրական  
ընկերության կամ  
կենսաթոշակային  
հիմնադրամի հետագա  
պարտավորությունների

գնահատման մաթեմատիկավերլուծական մերողներ, որոնք նախատեսում են ժողովրդագրական իրավիճակով պայմանավորված դրամային հոսքերի և կենսաբոշակների վճարման, ֆինանսական ցուցանիշների դիմամիկայի և այլ գործոնների կանխատեսումներ:

### **Ակտուարական հաշվետվություն      *Actuarial report***

Ապահովագրական ընկերության կամ կենսաբոշակային հիմնադրամի ֆինանսական վիճակը նկարագրող հաշվետվություն՝ ներկայացված ակտուարի կողմից:  
Հարակից հասկացություններ՝ Ակտուարական գնահատում:

### **Ակտուարական նվազեցում      *Actuarial reduction***

Սա կենսաբոշակի չափի նվազեցում է՝ պայմանավորված մասնակցի/կենսաբոշակառու

ի նախատեսվածից ավելի վաղ կենսաբոշակի անցնելու հանգամանքով:

### **Ակտուարական պակասուրդ *Actuarial deficiency***

Իրավիճակ, երբ հիմնադրամի ակտիվների ակտուարական արժեքն ավելի քիչ է, քան ակտուարական պարտավորություններինը:  
Ակտուարական պակասուրդն, ըստ Էության, այդ երկուսի միջև տարբերությունն է:  
Հարակից հասկացություններ՝ Ակտուարական ավելցուկ, Ակտուարական գնահատում:

### **Ակտուարական պարտավորություն *Actuarial liability***

Ակտուարական կանխատեսումների հիման վրա հաշվարկվող գումար, որը ներկայացնում է կենսաբոշակային ծրագրում կուտակված կենսաբոշակային նպաստների (իրավունքների) ներկայիս արժեքը:  
Հարակից հասկացություններ՝ Ակտուարական գնահատում:

## **Անաշխատունակության թերթիկ *Unemployment form***

Քաղաքացու ժամանակավոր  
անաշխատունակության  
ժամանակահատվածը  
հաստատող հատուկ ձևի  
փաստաթուղթ:

## **Անաշխատունակության նպաստ *Disability benefit***

Դրամական աջակցության ձև  
անաշխատունակ  
քաղաքացիներին:

## **Անհատական կենսա- քոշակային ծրագրեր *Individual pension plans***

Այս ծրագրերը մշակվում և  
կառավարվում են  
ուղղակիորեն  
կենսաքոշակային  
հիմնադրամի կամ որևէ  
ֆինանսական  
հաստատության կողմից, որը  
գործում է որպես կենսաքոշակ  
վճարող մարմին՝ առանց  
գործառուի որևէ  
միջամտության: Սակայն  
գործառուն ևս կարող է  
ներդրումներ կատարել

աշխատողների անհատական  
հաշվեհամարներին:

## **Անհատական հաշվառում *Personified registry***

Ապահովագրության ենթակա  
անձանց պարտադիր  
կենսաքոշակային  
ապահովագրության համար  
կատարված  
ապահովագրական  
վճարումների մասին  
տվյալների հաշվառման  
կազմակերպում և վարում:

## **Անհատական հաշիվ *Individual account***

Սոցիալական  
ապահովագրության ենթակա  
անձանց համար կատարված  
վճարումները,  
աշխատավարձի չափերը և  
անձի կենսաքոշակային  
իրավունքները հավաստող  
տվյալների ամբողջություն,  
որն օգտագործվում է  
կենսաքոշակի նշանակման,  
վերահաշվարկի և  
սոցիալական  
ապահովագրության այլ  
ծրագրերի համար: Հաճախ  
անհատական հաշիվը

մեկնաբանվում է իրեւ անձի համար պարտադիր կուտակային համակարգում վճարված և նրան պատկանող կենսաթոշակային կապիտալն արտացոլող ցուցանիշ:

**Անձնական  
կենսաթոշակային հաշիվ  
*Personal pension account***

Անձի՝ կենսաթոշակային հիմնադրամում կամ օրենքով նախատեսված դեպքերում Կենտրոնական դեպոզիտարիայում բացվող և վարվող անհատական հաշիվ:

**Անուիտետի դրույք  
*Annuity rate***

Որոշակի ժամանակահատվածում անհատին վճարվող միաչափ վճարումների ներկայիս արժեքը, որը հաշվարկվում է այնպիսի գործոնների հիման վրա, ինչպես օրինակ՝ անուիտետ ձեռք բերած անձի մահացության հավանականությունն ու ներդրումից ստացված հնարավոր եկամտաբերությունը:

**Անուիտետ ստացող անձ  
*Annuitant***

Անձ, որը միաչափ վճարում է ստանում որոշակի ժամանակահատվածի համար:

**Անուիտետ *Annuity***

1.Հիմնականում կյանքի ապահովագրությամբ գրաղվող ընկերությունների կողմից վաճառվող ֆինանսական պայմանագրի մի ձև, որը երաշխավորում է հաստատում կամ փոփոխական վճարումներ (ամիսը, եռամսյակը, կես տարին կամ տարին մեկ անգամ) անուիտետ գնողին (շահառուին):

2.Պարտադիր կուտակային միջոցները ապահովագրական ընկերությամբ միանվագ փոխանցելու դիմաց կենսաթոշակային տարիքում մինչև անձի կյանքի վերջը ստացվող ամսական վճար (կենսաթոշակ):

**Աշխատանքային կամավոր  
կենսաթոշակային ծրագրեր**

*Voluntary occupational pension plans*

Այս ծրագրերն ունեն կամավոր բնույթ (որոշումը կախված է գործատուներից), նույնիսկ եթե գործատուները շարունակում են հովանափորել այս ծրագրերը՝ սոցիալական ապահովության ներդրումներից ամբողջովին կամ մասամբ ազատվելու համար:

Հարակից հասկացություններ՝  
Աշխատանքային  
կենսաթոշակային ծրագիր:

*Աշխատանքային կենսաթոշակի կուտակային մաս  
Cumulative part of occupational pension*

Անհատական հաշվառման համակարգում ներգրավված ապահովագրված անձանց հաշվներում արտացոլված մաս, որ վճարվում է կատարված ապահովագրական վճարներին համապատասխան:

*Աշխատանքային կենսաթոշակային ծրագիր Occu-*

*pational pension scheme*

Գործատուների կողմից ստեղծված կենսաթոշակային ծրագրեր՝ ապահովելու որոշակի ֆինանսական պաշտպանություն այնպիսի դեպքերի համար, ինչպիսիք են ծերությունը, հիվանդությունը, մահը և այլն:

*Աշխատանքային պայմաններ Labour conditions*

Աշխատողի աշխատանքային միջավայրը պայմանավորող ֆիզիկական, սոցիալական, հոգեբանական և կառավարչական գործուներ, ինչպես նաև նրա աշխատանքի վարձատրությունը:

*Աշխատանքային ստաժ Service period*

1. Աշխատանքին ստաժը այն ժամանակահատվածն է, որի ընթացքում քաղաքացին եղել է աշխատանքային հարաբերությունների մեջ, ինչպես նաև այլ ժամանակահատվածներ, որոնք նորմատիվ իրավական

ակտերին կամ կոլեկտիվ պայմանագրերին համապատասխան, կարող են հաշվարկվել աշխատանքային ստաժում, որով աշխատանքային օրենսդրությունը, այլ նորմատիվ իրավական ակտերը և կոլեկտիվ պայմանագրերը պայմանավորում են որոշակի աշխատանքային իրավունքներ կամ աշխատանքային լրացուցիչ երաշխիքներ ու արտոնություններ:

2. Ապահովագրված անձանց կենսաթոշակային իրավունքների գնահատման նպատակով՝ օրացուցային կարգով հաշվարկված աշխատանքային և այլ գործունեության քանակական տևողությունը:

## **Աշխատաշուկա** *Labour market*

Գործատուներից և աշխատանք փնտրողներից բաղկացած համակարգ, (համապատասխանաբար որպես գնորդներ և վաճառողներ), որը կոչված է

համալրելու թափուր աշխատատեղերը աշխատանք փնտրողներով և սահմանելու վերջիններիս աշխատավարձերը:

## **Աշխատող *employee***

Աշխատողը «ՀՀ Աշխատանքային օրենսգրքով» սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի: Աշխատող են համարվում նաև ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անշափահաս քաղաքացիները: Մինչև տասնչորս տարեկան քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագիր կնքելը կամ

նրանց աշխատանքի  
ներգրավելը արգելվում է:

### **Ապահովագրական պահուստ *Insurance reserve***

Պահուստ, որ ստեղծվում է կենսաթոշակային հիմնադրամի կողմից իր պարտավորությունները մասնակիցների նկատմամբ սահուն իրականացնելու նպատակով:

Ապահովագրական պահուստի նորմատիվ չափը, ձևավորման և օգտագործման կարգը որոշվում է պետական լիազոր մարմնի կողմից:

### **Ապահովագրական ռիսկ *insurance risk***

1. Ապահովագրական ռիսկ է համարվում ապահովագրված անձի կողմից եկամտի (վճարների, ապահովագրված անձի օգտին կատարած պարզևատրումների) կամ այլ եկամուտների կորստի հավանականությունը, որը պայմանավորված է ապահովագրական դեպքի վրա հասնելով:

2. Ապահովագրական դեպքի հայտ գալու հավանականություն:

### **Ապահովագրական ստած *Insurance rate***

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված աշխատանքային և այլ գործունեության ժամանակահատվածների հանրագումար, որի ընթացքում ֆիզիկական անձը ենթակա է եղել պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովության և նրա կողմից օրենքով սահմանված կարգով կատարվել են պարտադիր կենսաթոշակային սոցիալական

ապահովագրության և նրա կողմից օրենքով սահմանված կարգով կատարվել են պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության վճարումներ /«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետ/:

2. Աշխատանքային կենսաթոշակ սահմանելու համար աշխատանքների և այլ կարգի գործունեության ժամանակահատվածների

գումարը, որի ընթացքում  
կենսաթոշակային վճարներ  
են կատարվել, ինչպես նաև  
մյուս  
ժամանակահատվածները,  
որոնք նույնպես հաշվարկվում  
են որպես ապահովագրական  
ստած:

**Ապահովագրական վճար**  
*Insurance payment*

Աշխատանքային  
կենսաթոշակի պարտադիր  
կուտակային մասի  
ֆինանսավորմանն ուղղված  
պարտադիր վճարումներ, որ  
ապահովադիր կողմից  
վճարվում են  
ապահովագրական  
հիմնադրամ՝ հօգուտ  
ապահովագրված անձի:

**Ապահովադիր *Insurer***

Սոցիալական վճարումներ  
կատարող և դրանք  
պարտադիր սոցիալական  
ապահովագրության բյուջե  
փոխանցող (վճարող)  
իրավաբանական և  
ֆիզիկական անձինք, այդ  
թվում՝ օտարերկրացիներ,  
ախտական և համայնքային

ենթակայության հիմնարկներ,  
որոնք աշխատուժ են  
ներգրավում աշխատանքային  
պայմանագրով, ինչպես նաև  
կնքում են  
քաղաքացիական բնույթի պայմանագրեր, որոնց  
հիման վրա կատարվում են  
ապահովագրական վճարներ:

**Ապահովագրված անձ**  
*Insured person*

Ֆիզիկական անձ, որը կարող  
է հանդիսանալ  
կենսաթոշակային  
ապահովագրության  
համակարգի մասնակից և որը  
պարտադիր և/կամ կամավոր  
կենսաթոշակային  
ապահովագրության  
պայմանագիր է կնքել  
ապահովագրություն  
իրականացնող ընկերության  
հետ:

**Ապառք *Debt***

Սահմանված ժամկետներում  
ապահովադիրների չվճարած  
սոցիալական վճարների  
գումար:

**Առաջնային շահառու  
*Primary beneficiary***

Առաջնային շահառու  
(կենսաքոչակային  
ակտիվների նկատմամբ  
իրավունքների ժառանգման  
իմաստով) կարող են  
համարվել.  
- մահացածի այրին,  
- մանկահասակ երեխաներ  
ունեցող միայնակ հայրը կամ  
մայրը  
- մահացածի որդին կամ  
դուստրը:

**Առողջության  
ապահովագրություն  
*Health insurance***

Բժշկական և/կամ  
հիվանդանոցային խնամքը  
փոխհատուցելու պետական  
կամ մասնավոր ծրագիր, կամ  
եկամտի կորուստի  
փոխհատուցում  
հիվանդության, վճասվածքի  
կամ պատահարի դեպքում:

**Առողջական կարգավիճակ  
*Health status***

Անհատի, խմբի կամ  
բնակչության վիճակ՝

կապված առողջության  
որակական կամ քանակական  
ցուցանիշների հետ, ինչպիսիք  
են հիվանդությունները,  
մահացությունը և այլն:

**Առողջապահական  
ապահովություն  
*Health care delivery***

Բուժման համար  
տրամադրվող դրամական  
կամ ոչ դրամական  
նպաստներ և/կամ  
ծառայություններ:

**Արդար արժեք *Fair value***

Արժեք, որով ակտիվները  
կամավոր կերպով գնորդից  
անցնում են վաճառողին՝  
համարելով, որ երկուսն էլ  
ունեն հստակ և բավարար  
գիտելիքներ շուկայական  
գների մասին:

**Արյունաբերական  
(ճյուղային) կենսա-  
քոչակային հիմնադրամ  
*Industry pension fund***

Գործունեության միևնույն  
ոլորտում ներգրավված  
գործատումների կողմից

ստեղծված կենսաքոշակային հիմնադրամ:

### **Արիեստակցական միություն *Trade union***

Աշխատողների կազմակերպություն՝ սովորաբար միավորված մեկ ձեռնարկության շրջանակներում, որը կոչված է կոլեկտիվ գործողություններով պաշտպանելու կամ բարելավելու իր անդամների տնտեսական և սոցիալական վիճակը:

### **Արժեքուղի *Security***

Փաստաթուղթ, որը սահմանում է սեփականության (օր. բաժնետոմս) կամ պահանջի (օր. պարտատոմս) իրավունքներ, որոնց իրականացումը կամ փոխանցումը հնարավոր է միայն վերջինիս ներկայացմամբ: Արժեքուղի փոխանցմամբ նրա բոլոր լիազորությունները կամ պահանջի իրավունքները

փոխանցվում են այն ձեռք բերողին:

### **Առιդիտ *Audit***

Համապատասխան մասնագիտացում ունեցող անձի կամ կազմակերպության կողմից առιդիտ անցնող ընկերության ֆինանսական, հաշվապահական և այլ ուղղորդող փաստաթղթերի ստուգում և վավերացում:

### **Առιդիտոր *Auditor***

Որակավորում ունեցող անձ կամ կազմակերպություն, որն արտոնված է առιդիտ անցկացնելու համար:

## Բ

### Բազային կենսաքոշակ *Basic pension*

Բազային կենսաքոշակը ամսական վճար է, որը հաշվարկվում է ըստ բազային կենսաքոշակի հաշվարկման բանաձևի և վճարվում պետական բյուջեից՝ օրենքով սահմանված կենսաքոշակային տարիքին հասած անձանց:

### Բազմագործատու կենսաքոշակային հիմնադրամներ *Multi- employer pension funds*

Տարբեր ծրագրերի հովանավորների կողմից ստեղծված կենսաքոշակային հիմնադրամ: Գոյություն ունեն երեք տեսակ բազմագործատու կենսաքոշակային հիմնադրամներ. ա) հարակից գործատուների համար, որոնք ֆինանսապես փոխկապակցված են կամ պատկանում են տնօրինման միևնույն խմբին (խմբակային կենսաքոշակային

հիմնադրամ), բ) ոչ հարակից գործատուների համար, ովքեր ընդգրկված են միևնույն գործունեության տեսակում (արդյունաբերական

կենսաքոշակային հիմնադրամ), գ) ոչ հարակից գործատուների համար, որոնք կարող են լինել առևտրի կամ բիզնեսի տարբեր տեսակներում (կոլետիվ կենսաքոշակային հիմնադրամ):

Հարակից հասկացություններ՝ Արդյունաբերական կենսաքոշակային հիմնադրամ, Բազմագործատու կենսաքոշակային հիմնադրամ :

### Բաժնեմասի արժեք *Share value*

Տեղաբաշխված ներդրումային յուրաքանչյուր բաժնեմասին ընկնող գուտ ակտիվների դրամական մեծությունը:

### Բաժնետեր/Փայատեր *Shareholder*

1. Ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի

անունով ընկերության  
բաժնետերերի ռեստրում  
մուտքագրված է գրանցում  
նրան պատկանող  
ներդրումային բաժնեմասերի  
մասին:

2. Ընկերության  
կանոնադրական  
կապիտալում  
մասնակցություն ունեցող  
անձ:

### **Բաժնետոնս Share**

Արժեքուղթ, որն ամրագրում է  
բաժնետիրական ընկերության  
եկամուտների նկատմամբ մի  
մասի ստացման  
իրավունքները՝  
դիվիդենտների տեսքով,  
ինչպես նաև նրա իրավունքը  
այդ ընկերության  
դեկավարման  
աշխատանքներին  
մասնակցելու (ոչ միշտ քանի  
որ կան նաև արտոնյալ  
բաժնետոմսեր, որոնք ձայնի  
իրավունք չեն տալիս) և այդ  
ընկերության լուծարումից  
հետո դրա մի մասի  
սեփականության նկատմամբ:

**Բաշխողական**  
**կենսաթոշակային**  
**համակարգ Pay-As-You-Go**  
**(PAYG) pension plan**

Համերաշխության սկզբունքի  
հիման վրա գործող  
կենսաթոշակային  
համակարգ, որի պայմանները  
չեն նախատեսում ներդրողի  
կողմից կոնկրետ մասնակցի  
օգտին կատարված  
կենսաթոշակային  
մուծումների  
անհատականացում: Այլ կերպ  
ասած՝ ներկա աշխատողները  
վճարում են ներկա  
կենսաթոշակառուների  
համար:

### **Բարեկեցություն Wellbeing**

Անհատի  
ապահովածությունը  
բնութագրող ցուցանիշ,  
մասնավորապես նրա  
եկամուտների, սոցիալական և  
առողջապահական  
ապահովածության  
համատեքստում:

**Բացահայտման**  
**կանոնակարգեր**  
**Disclosure regulations**

Այն կանոնները, որոնցով պետք է ուղղորդվի կենսաթոշակային ծրագիրը՝ իր մասնակիցներին կամ վերահսկող մարմնին ծրագրի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելիս:

**Բաց կենսաթոշակային հիմնադրամներ**  
*Open pension funds*

Հիմնադրամներ, որոնք սահմանափակումներ չունեն անդամակցության հարցում:  
Հարակից հասկացություններ՝  
Փակ կենսաթոշակային հիմնադրամ:

**Բեռնվածության գործակից**  
*Dependency ratio*

Կենսաթոշակային նպաստներ ստացողների և կենսաթոշակային իրավունքներ կուտակողների թվի հարաբերակցություն:  
Հարակից հասկացություններ՝  
Կախվածության հարաբերակցություն:

**Գ**

**Գերֆիճանասավորում**  
*Overfunding*

Իրավիճակ, երբ կենսաթոշակային ծրագրի ակտիվների արժեքն ավելին է քան պասիվները. ունի ակտուարական հավելուրդ:  
Հարակից հասկացություններ՝  
Ֆինանսավորման մակարդակ, Ակտուարական հավելուրդ,  
Թերֆիճանասավորում:

**Գլոբալիզացիա** *Globalization*

Աշխարհի տարբեր անկյուններում մարդկանց, ինչպես նաև կորպորացիաների միջև աճողական ինտեգրման և համագործակցության գործընթաց:

**Գնաճային ինդեքսավորում**  
*Inflation indexation*

Մեթոդ, որով ճշգրտվում են կենսաթոշակային նպաստները՝ հաշվի առնելով գների մակարդակի ընդհանուր փոփոխությունները:

տեղի ունեցած գործարքների  
մասին:

### **Գործակալ *Agent***

Իրավաբանական անձ, որն իրականացնում է հիմնադրամի ներդրումային բաժնեմասերի տեղաբաշխումն ու գնումը՝ համաձայն հիմնադրամի ակտիվները կառավարող ընկերության հետ կնքված պայմանագրի: Գործակալի հիմնական գործառույթը պոտենցիալ ներդրողներին արդի տեղեկատվության տրամադրումն է, բաժնեմասերի ձեռք բերման և գնման հայտերի ընդունումը, ինչպես նաև ներդրումային բաժնեմասերի տերերին ուղարկությունները տրամադրումը:

### **Գործառույթների արձանագրման մատյան *Operations registry***

Ուղարկությունների ամրողությունը, որոնք տեղեկատվություն են պարունակում ապահովագրված անձանց անհատական հաշիվներում

### **Գործատու *Employer***

1. Գործատուն աշխատանքային հարաբերության այն մասնակիցն է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և (կամ) օրենքով սահմանված կարգով օգտագործում է աշխատողի աշխատանքը: Գործատու կարող է լինել աշխատանքային իրավունակություն և գործունակություն ունեցող իրավաբանական անձը՝ անկախ կազմակերպահրավական և սեփականության ձևից, գործունեության բնույթից և տեսակից:

2. Քաղաքացիաիրավական հարաբերությունների ցանկացած սուբյեկտ, որն իր գործունեության իրականացման կամ ապահովման համար իրավունք ունի օրենքով շարգելված աշխատանք առաջարկել ֆիզիկական անձանց, այդ նպատակով

աշխատողներ վարձել և  
աշխատանքային  
պայմանագրեր կնքելու  
միջոցով նրանց ներգրավել  
որոշակի աշխատանքների  
կատարման մեջ:

Դ

**Դեպոզիտար  
գործունեություն  
*Depository activities***

Արժեքութերի վկայականների պահպանման և/կամ արժեքութերի իրավունքների փոխանցման ծառայությունների մատուցում:

**Դեֆիցիտ *Deficit***

Իրավիճակ, երբ կենսաբոշակային ծրագրի ակտիվների ակտուարական արժեքն ավելի քիչ է ակտուարական պարտավորություններից:

Ե

**Եկամուտ *Income***

1. Ներդրումներից, մատուցված ծառայությունների և/կամ կատարված աշխատանքների դիմաց ստացված գումար:
2. Ծահույթ-վճասի հաշվետվության ամենավերին տողը:

**Եկամտի փոխարինման  
գործակից**

***Earnings replacement rate***

Կենսաբոշակների չափը՝ արտահայտված նախկին վաստակների նկատմամբ տոկոսային հարաբերությամբ:

**Երաշխավորված եկամուտ  
*Guaranteed income***

Պետության կողմից երաշխավորված նվազագույն եկամուտ այն անձանց կամ լնտանիքներին, որոնց եկամուտը ցածր է որոշակի սահմանված մակարդակից: Կան երաշխավորված եկամտի ապահովման

տարբեր մեթոդներ. բացասական եկամտահարկ, ընտանեկան նպաստներ, սոցիալական աջակցություն և այլն:

**Երաշխավորված  
կենսաքոշակ**  
*Guaranteed pension*

Նվազագույն կենսաքոշակի տեսակ:

**Երեխայի  
արձակուրդ**  
*Child-care leave*

Երեխային մինչև սահմանված տարիքը խնամելու համար աշխատանքային արձակուրդ: Ետծծնողան խնամքի նպատակով արձակուրդում գտնվող ծնողին հաշվարկվում է կենսաքոշակ, եթե նա, համաձայն այդ երկրի օրենսդրության, ստանում է աշխատավարձ:

**EET համակարգ** *EET system*

Կենսաքոշակային ծրագրերի հարկման ձև, որի դեպքում ներդրումներն ազատվում են հարկումից, կենսաքոշակային հիմնադրամի ներդրումային եկամուտը և կապիտալի աճից ստացված շահույթը հարկվում են, իսկ կենսաքոշակային նպաստները ենթակա չեն հարկման:

հիմնադրամի ներդրումային եկամուտը և կապիտալի աճից ստացված շահույթը նույնպես ազատվում են հարկումից և միայն կենսաքոշակային նպաստներն են ենթակա հարկման: Հարակից հասկացություններ՝ TEE համակարգ, ETE համակարգ:

**ETE համակարգ**  
*ETE system*

Կենսաքոշակային ծրագրերի հարկման ձև, որի դեպքում ներդրումներն ազատվում են հարկումից, կենսաքոշակային հիմնադրամի ներդրումային եկամուտը և կապիտալի աճից ստացված շահույթը հարկվում են, իսկ կենսաքոշակային նպաստները ենթակա չեն հարկման:

Հարակից հասկացություններ՝ EET համակարգ, TEE համակարգ:

**Երկարացված անաշխատու-  
նակության ապահո-  
վագրություն** *Prolonged  
disability insurance*

Ապահովագրական պոլիս, որով եկամուտ է վճարվում կենսաթոշակային ծրագրի անաշխատունակ կամ երկարաժամկետ իիվանդության մեջ գտնվող մասնակցին: Կենսաթոշակային ծրագիրը կարող է զննել այդ պոլիսը՝ որպես տվյալ մասնակցի նպաստի մի մաս: Պոլիսով կարող է դադարեցվնել վճարումը, եթե կենսաթոշակային ծրագրի մասնակիցը հասնում է նորմալ կենսաթոշակային տարիքի:

Զ

### Չուտ ակտիվների արժեք *Net assets value*

Մեծություն, որը որոշվում է կենսաթոշակային հիմնադրամի պարտավորությունների արժեքի չափով հիմնադրամի ակտիվների արժեքի նվազեցմամբ:

### Զբաղվածություն արտերկրում *Employment abroad*

Վարձատրվող աշխատանք արտերկրում: Սինչև արտերկրում աշխատանքի անցնելը, ցանկալի է պարզել կենսաթոշակային հարցերը:

### Չուտ հատուցադրույթ *Net rate of return*

Սահմանված ժամանակահատվածում ակտիվների կամ դրանց պորտֆելի հատուցադրույթ՝ միջնորդավճարի չափով այն նվազեցնելուց հետո:

Հարակից հասկացություններ՝  
Հատուցադրույք, Համախառն  
հատուցադրույք:

Ը

Ընդհանուր ներդրումային  
հիմնադրամ  
*Common investment fund*

Երկու և ավելի  
կենսաթոշակային  
ծրագրերում կուտակված  
ներդրումների միավորումը մեկ  
ընդհանուր ներդրումային  
հիմնադրամում:

Ընդունված կենսաթո-  
շակային տարիք *Normal  
pension age*

Տարիք, որից սկսած անձը  
կարող է հավակնել  
կենսաթոշակային նպաստի:  
Նմանատիպ  
հասկացություններ՝  
Կենսաթոշակին անցնելու  
տարիք/կենսաթոշակային  
տարիք:

Ընտանիք *Family*

Սիննույն բնակության  
վայրում հաշվառված և (կամ)  
փաստացի բնակվող  
քաղաքացիների սոցիալական  
փոքր խումբ, որի անդամները

վարում են ընդհանուր  
տնտեսություն և ունեն  
ընդհանուր բյուջե:

**Ծ**

**Ի**

**Թերֆինանսավորում**  
*Underfunding*

Իրավիճակ, երբ ծրագրի ակտիվների արժեքն ավելի քիչ է, քան պասիվներինը (ակտուարական պակասուրդ):  
 Հարակից հասկացություններ՝ Ֆինանսավորման մակարդակ, Ակտուարական պակասուրդ:

**Թույլատրելի ակտիվներ**  
*Permissible assets*

Օրենքով սահմանվող թույլատրելի ներդրումային ակտիվներ:

**Ինքնազբաղվածներ**  
*Self-employed persons*

Առանց աշխատանքային պայմանագրի շահույթի նպատակով աշխատող անձինք: (օրինակ՝ բժիշկները, իրավաբանները, արվեստագետները և այլ):

## L

### Լիազոր *Trustee*

Անձ կամ կազմակերպություն, որը պարտականություն ունի ստանալու, կառավարելու և վճարելու կենաքոշակային ծրագրի ակտիվները:

### Լիովին ֆինանսավորված կենաքոշակային ծրագիր *Fully Funded Pension scheme*

Սահմանված ներդրումների (DC) սխեմայով գործող կենաքոշակային համակարգ, որտեղ կենաքոշակներն արդյունք են իրական կուտակումների և դրանց ներդրումներց ստացված տոկոսային եկամտաբերության. այն է՝ իրական կուտակային համակարգ:

### Լրացուցիչ կամավոր վճարներ *Additional voluntary contribution*

Հավելյալ վճար, որ կենաքոշակային ծրագրի մասնակիցը կարող է

կամավոր կերպով վճարել իր ընտրած կենաքոշակային ծրագրին՝ մեծացնելու իր ապագա կենաքոշակի չափը:

### Լրացուցիչ նպաստ *Supplementary benefit*

Փոխհատուցում կամ դրամական նպաստ (սովորաբար կարիքավորության աստիճանից ելնելով՝ ծածկելու այն պակասուրդը, որն առաջանում է նշանակված նպաստների անհրաժեշտ նվազագույնից պակաս լինելու դեպքում):

### Լրացուցիչ արտոնություններ *Fringe benefits*

Կանխիկ, ոչ կանխիկ վարձատրություն կամ կատարված աշխատանքի համար վարձատրությանը զուգահեռ ծառայություններ. այն է՝ բնակապահովման, սննդի, կրթության, ճանապարհորդության, տեղաբնակեցման արտոնություններ և այլն: Կիրառվում է

աշխատանքային  
կենսաթոշակային ծրագրի  
կողմից կենսաթոշակի  
անցնելու, դժբախտ  
պատահարների,  
հիվանդության,  
հաշմանդամության կամ  
մահվան նպաստների հետ  
կապված և ամբողջովին կամ  
մասնակիորեն  
ֆինանսավորվում է  
գործառուների կողմից:

**Խառը կենսաթոշակային  
համակարգ**  
*Mixed pension system*

Կենսաթոշակային  
բաշխողական և կուտակային  
համակարգերի  
համակցություն, երբ ապագա  
կենսաթոշակները  
նախատեսվում է վճարել  
երկու տարբեր՝ բաշխողական  
և կուտակային  
համակարգերից:

**Խառը ինդեքսավորում Mixed  
indexation**

Սերող, որով  
կենսաթոշակային  
նպաստները ճշգրտվում են՝

հաշվի առնելով միջին  
աշխատավարձի, ինչպես նաև  
գների ընդհանուր  
մակարդակի  
փոփոխությունները:

**Խնամքի վճար Maintenance  
payment**

Վերականգնման փուլում  
գտնվող հաշմանդամների  
հիմնական կենսական  
պայմանները հոգալուն  
ուղղված մասնավոր կամ  
պետական օգնություն:

**Խնամքի տակ գտնվող  
Dependent**

Անհատ, որը նյութապես  
կախված է կենսաթոշակային  
համակարգի մասնակցից:

**Խմբակային  
տեղափոխություն  
Bulk transfer**

Կենսաթոշակային ծրագրի  
մասնակիցներից կազմված  
խմբի՝ մի կենսաթոշակային  
ծրագրից մյուսին անցնելը:

**Ծ**

**Կ**

**Ծերության կենսաքոշակ**  
*Old-age pension*

Տարիքային  
ապահովագրական  
կենսաքոշակի իրավունք  
չունեցող աճածին 65 տարին  
լրանալու դեպքում  
նշանակում է ծերության  
սոցիալական կենսաքոշակ:

**Ծերության կենսաքոշակի  
վճարման նախատեսվող  
ժամանակահատվածը**  
*Expected period of an old-age  
pension payment*

Վիճակագրական  
կանխատեսելի  
ժամանակահատված, որի  
ընթացքում նախատեսվում է  
վճարել ծերության  
կենսաքոշակ:

**Կախվածության  
հարաբերակցություն**  
*Dependency ratio*

Կենսաքոշակային տարիքի  
բնակչության  
հարաբերակցությունն է  
աշխատանքային տարիքի  
բնակչությանը: Այլ կերպ  
ասած՝ ոչ ակտիվ (սրա մեջ  
մտնում են նաև երեխաները) և  
ակտիվ տարիքի բնակչության  
միջև հարաբերակցությունն է:

**Կամավոր  
ապահովագրություն**  
*Voluntary insurance*

Կամավոր կերպով  
մասնակցությունն է  
սոցիալական  
ապահովագրության  
համակարգին:

**Կամավոր կենսաքոշակային  
ապահովագրություն**  
*Voluntary pension insurance*

Կամավոր կենսաքոշակային  
ապահովագրությունը  
հիմնականում ամբողջությամբ

Վճարվում է անհատի կողմից (սակայն սա անհրաժեշտ պայման չէ) հենց իր համար և խնայողության մի տեսակ է, որի նպատակը ապագա կենսաքաղաքառուի առավել բարեկեցիկ ծերության ապահովումն է:

### Կամավոր ներդրում *Voluntary contribution*

Հավելյալ ներդրումներ, որոնք կատարվում են ի լրումն պարտադիր կենսաքաղաքային ներդրումների: Մասնակիցը կարող է կամավոր կերպով վճարել կենսաքաղաքային հիմնադրամին՝ հետագա կենսաքաղաքային նպաստներն ավելացնելու համար:

### Կամավոր վճար *Voluntary payment*

Այն վճարն է, որը գործատուն փոխանցում է աշխատողի հաշվին՝ նախապես չստանձնելով նման պարտավորություն:

### Կանխավճար *Prepayment*

Աշխատողի կողմից վճարված ավել գումար, որը նա պարտավոր չէր վճարել ժամանակի տվյալ պահին:

### Կանխատեսում *Forecast*

Ենթադրություն առ այն, թե ինչ կարող է կատարվել ապագայում:

### Կանխիկացման տարրերակ *Cash option*

Կուտակված գումարը կենսաքաղակի անցնելու պահին ամբողջությամբ կամ մասնակի կանխիկացնելու հնարավորություն:

### Կանոնակարգող մարմին *Regulatory authority*

Հարակից հասկացություններ՝ Վերահսկող խորհուրդ :

### Կամրջող կենսաքաղաքակ *Bridge pension*

Կենսաքաղաքակի տեսակ, որը թույլ է տալիս

կենսաթոշակային ծրագրի մասնակցին ստանալու իրեն հասանելիք կենսաթոշակն իր ընտրած կենսաթոշակային ծրագրից՝ մինչև օրենքով սահմանված կենսաթոշակի անցնելու տարիքն ընկած ժամանակահատվածի համար:

### **Կապիտալիզացված արժեք *Capitalised value***

Ապագայում վճարվելիք գումարի արժեքն է՝ բերված ներկա արժեքի:

### **Կառուցվածքային կարգավորում      *Structural adjustment***

Տնտեսական և ֆինանսական ցուցանիշների կարգավորում՝ զբաղվածության քաղաքականության, հարկային օրենտդության, գնաճի, արտաքին պարտքի կարգավորման միջոցով:

### **Կենսաթոշակ *Pension***

1.        Որևէ        կոնկրետ իրադարձության հանդես

գալու դեպքում (օր. կենսաթոշակային տարիքի հասնելը) պարբերական վճարում մինչև կենսաթոշակառուի կյանքի վերջը:

2. Կենսաթոշակը ամենամսյա պետական կամ ոչ պետական դրամական վճարում է, որի ստանալու իրավունքը սահմանվում է օրենքով և վճարվում է նախկինում հետաձգված աշխատավարձի դրամական փոխհատուցման նպատակով:

Հարակից հասկացություններ՝ Նպաստ:

### **Կենսաթոշակային ակտիվներ *Pension assets***

Կենսաթոշակային ծրագրի հետ կապված ներդրումների բոլոր ձևերի ընդհանուր արժեքը:

### **Կենսաթոշակային ապա- հովության համակարգ *Pension security system***

Քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիների կենսաթոշակային

ապահովության նպատակով  
գործող պետական և ոչ  
պետական կենսաթոշակային  
ապահովության  
հաստատությունների  
հարաբերությունների  
ամրողությունը:

**Կենսաթոշակային  
ապահովագրական  
պայմանագրեր**  
*Pension insurance contracts*

Ապահովագրական  
պայմանագրեր, որոնք  
մանրամասնում են  
ապահովագրական  
ընկերության  
կենսաթոշակային  
ծրագրերում կատարվող  
ներդրումները, որոնց դիմաց  
նախատեսվում է վճարել  
կենսաթոշակային  
նպատմեր, երբ  
պայմանագրի կողմ  
համփասցող մասնակիցները  
հասնեն սահմանված  
կենսաթոշակային տարիքի  
կամ պարզապես վերջիններս  
վաղաժամկետ դուրս գան  
կենսաթոշակային այդ  
ծրագրերից:

**Կենսաթոշակային  
գրաղվածություն *Pensionable  
employment***

Զբաղվածության  
ժամանակահատված (ստաժ),  
որը հաշվի է առնվում  
կենսաթոշակային  
նպաստները հաշվարկելու  
ժամանակ:

**Կենսաթոշակի  
ինդեքսավորում**  
*Pension Indexation*

Մեթոդ, որով ճշգրտվում են  
կենսաթոշակային  
նպաստները՝ հաշվի առնելով  
կենսական ծախսերի  
մակարդակի վրա ազդող  
գործուները (օրինակ՝ գների  
և/կամ միջին  
աշխատավարձերի  
փոփոխությունը):  
Հարակից հասկացություններ՝  
գնաճային ինդեքսավորում,  
Խառը ինդեքսավորում:

**Կենսաթոշակային ծրագիր**  
*Pension plan*

1. Կենսաքոշակային բնույթի իրավաբանորեն պարտադիր պայմանագիր, որը կարող է հանդիսանալ  
աշխատանքային

պայմանագրի ավելի ընդգրկուն մի մաս: Այն կարող է սահմանված լինել ծրագրի կանոններով կամ փաստաթղթերով կամ կարող է պահանջվել ըստ օրենքի: Կենսաքոշակային ծրագրերը կարող են առաջարկել հավելյալ նպաստներ, ինչպես օրինակ՝ հաշմանդամության, հիվանդության և կերակրողին կորցնելու դեպքում վճարվող նպաստներ:

2. Կենսաքոշակային կուտակումների և դրանց վճարման կարգը սահմանող պայմանների ամբողջություն:

**Կենսաքոշակային ծրագրի կառավարիչ *Pension plan administrator***

Կենսաքոշակային ծրագրի գործունեության իրականացման և վերահսկողության համար պատասխանատվություն կրող անձ:

**Կենսաքոշակային ծրագրի հովանավոր *Pension plan sponsor***

Հաստատություն (օրինակ՝ ընկերություն, արդյունաբերական, աշխատանքային միություն), որը մշակում է կենսաքոշակային ծրագիրն ու սովորաբար աջակցություն է ցուցաբերում իր աշխատակիցներին ծրագրի իրականացման հարցում:

**Կենսաքոշակային ծրագրի մասնակից *Pension plan member***

Նմանատիպ հասկացություններ՝ Հիմնադրամի մասնակից, Մասնակից, Կենսաքոշակային հիմնադրամի մասնակից:

**Կենսաքոշակային կուտակումներ *Pension accumulations***

1. Հիմնադրամի սեփականություն

հանդիսացող այն միջոցների ամբողջությունը, որոնք նախատեսված են Հիմնադրամի՝ ապահովագրված անձանց նկատմամբ ստանձնած պարտավորությունների կատարման համար:

2. Անհատական հաշվեհամարի հատուկ մասում գրանցված միջոցների ամբողջությունը, որը ձևավորվում է աշխատանքային կենսաթոշակների պարտադիր կուտակային ֆինանսավորմանն ուղղված ապահովագրական վճարներից և դրանց ներդրումային եկամուտներից:

**Կենսաթոշակային  
կուտակումների ներդրումից  
ստացված եկամուտներ**  
*Incomes received from  
invested pension  
accumulations*

Կենսաթոշակային  
կուտակային միջոցների ներդրման արդյունքում ստացված դիվիդենտներ և տոկոսավճարներ,

ակտիվների վաճառքից գոյացած մաքուր ֆինանսական եկամուտներ, որ արտացոլում են ներդրումային պորտֆելի շուկայական գնի փոփոխությունը:

**Կենսաթոշակի հաշվարկ**  
*Pension estimate*

Գրանցված տվյալների հիման վրա ապագա եկամուտներով պայմանավորված կենսաթոշակի հաշվարկ կամ կանխատեսում: Այն կարող է նաև քաղվածքի տեսքով տրամադրվել կենսաթոշակային վճարներ կատարող անձանց:

**Կենսաթոշակային հաշիվ**  
*Pension account*

Հիմնադրամի՝ ներդրողների, մասնակիցների կամ ապահովագրված անձանց նկատմամբ ունեցած պարտավորություններն արտացոլող վերլուծական հաշվառման ձև:

**Կենսաթոշակային հաշվի  
բացում *Pension account  
opening***

Կենսաթոշակային հաշվում ներդրողի առաջին մուծմամբ պայմանավորված հաշվառման գործառույթների սկիզբը:

**Կենսաթոշակային հաշվի  
վիճակի մասին ծանուցում  
(քաղաքացի կենսաթոշակային  
հաշվից) Notice on pension  
account status (excerpt from  
pension account)**

Հիմնադրամի կողմից  
ներդրողին (մասնակցին)  
ուղարկվող և նրա  
կենսաթոշակային հաշվի  
վիճակի մասին  
տեղեկություններ  
պարունակող փաստաթուղթ:

**Կենսաթոշակային  
հիմնադրամ *Pension fund***

Կենսաթոշակային ծրագրի նպաստները ֆինանսավորելու բացառիկ նպատակով ստեղծված անկախ իրավաբանական անձ, որի

ակտիվները ձևավորվում են կենսաթոշակային ներդրումների հաշվին: Ծրագրի մասնակիցները կենսաթոշակային հիմնադրամի ակտիվների նկատմամբ ունեն օրինական կամ արտոնյալ իրավունք կամ որևէ այլ պայմանագրային պահանջ:

**Կենսաթոշակային  
հիմնադրամի կառավարիչ  
*Pension fund administrator***

Անձ, ով վերջնական պատասխանատվություն է կրում կենսաթոշակային հիմնադրամի գործունեության իրականացման և վերահսկողության համար:

**Կենսաթոշակային հիմ-  
նադրամի կառավարման  
ընկերություն *Pension fund  
managing company***

Ընկերության կազմակերպարավական ձև ունեցող կառավարման մարմին, որի բացառիկ պատասխանատվությունը

Կենսաթոշակային  
հիմնադրամի կառավարումն է:

**Կենսաթոշակային  
հիմնադրամի կառավարում**  
*Pension fund governance*

Կենսաթոշակային  
հիմնադրամի գործունեության  
իրականացում և  
վերահսկողություն:

Կառավարման մարմինը  
պատասխանատու է  
ընդհանուր կառավարման  
համար, սակայն  
գործունեության հստակ  
ընթացքն ապահովելու համար  
կարող է վարձել նաև այլ  
մասնագետներ, ինչպես  
օրինակ՝ ակտուարներ,  
խորհրդատուններ, ակտիվների  
կառավարիչներ:

**Կենսաթոշակային  
հիմնադրամի ղեկավար  
մարմին** *Governing body of  
the pension fund*

Կենսաթոշակային  
հիմնադրամի ղեկավար  
մարմինը մի օղակ է, որը  
առավելագույն մեծ  
պատասխանատվություն է

կրում կենսաթոշակային  
հիմնադրամի կառավարման  
համար՝ որպես առաջնային  
նպատակ ունենալով  
կենսաթոշակային  
եկամուտների ապահովության  
խնդիրը: Այն դեպքերում, եթե  
գործառության և  
վերահսկողական  
պատասխանատվությունները  
բաժանվում են  
հաստատության տարբեր  
կոմիտեների միջև,  
կառավարման խորհուրդը  
ղեկավար մարմնի դերն է  
ստանձնում:

**Կենսաթոշակային  
հիմնադրամի մասնակից**  
*Pension fund member*

Նմանատիպ հասկացություն՝  
Մասնակից,  
Կենսաթոշակային ծրագրի  
մասնակից:

**Կենսաթոշակային հիմքեր**  
*Pension bases*

Կենսաթոշակային ծրագրի  
մասնակցի կողմից  
կենսաթոշակային ստանալու  
իրավունքի հիմքեր, ինչպես

նաև ապահովագրված անձի կողմից աշխատանքային կենսաթոշակի կուտակային մասը կամ մասնագիտական կենսաթոշակ ստանալու իրավունքի հիմքեր:

**Կենսաթոշակային  
մուծումներ**  
*Pension contributions*

Համաձայն կենսաթոշակային պայմանագրի պահանջների՝ համապատասխան դրամական միջոցներ, որ ներդրողի (կամ մասնակցի) կողմից վճարվում են մասնակցի օգտին:

**Կենսաթոշակի նշանակման  
ծանուցում (տեղեկանք)**  
*Notification on pension  
assignment (reference)*

Կենսաթոշակային ծրագրի մասնակցին կենսաթոշակի սկսման և վճարման կարգի մասին ծանուցող փաստաթուղթ, որը հաստատում է նրա կենսաթոշակ ստանալու իրավունքը:

**Կենսաթոշակային ոլորտը  
կանոնակարգող**  
*Pension  
regulator*

Պետական մարմին, որն ունի կենսաթոշակային համակարգի քաղաքականություն մշակելու, վերահսկելու իրավասություն: Հարակից հասկացություններ՝ Կենսաթոշակային ոլորտը վերահսկող մարմին:

**Կենսաթոշակային ոլորտը  
վերահսկող մարմին**  
*Pension  
supervisor*

Պետական մարմին, որն ունի կենսաթոշակային համակարգը վերահսկելու իրավասություն: Հարակից հասկացություններ՝ Կենսաթոշակային ոլորտը կանոնակարգող մարմին:

**Կենսաթոշակի չափի վերա-  
հաշվարկ**  
*Recalculation of  
pension rate*

Գործողություններ, որոնց արդյունքում կենսաթոշակառուի հայտարարության հիման վրա

իրականացվում  
օրենսդրությամբ  
նախատեսված կարգով  
կենսաթոշակի նշանակման  
ժամանակ հաստատված  
չափի փոփոխություններ:

### Կենսաթոշակային պահուստներ *pension reserves*

Սիջոցների ամբողջություն,  
որը կենսաթոշակային  
պայմանագրերի համաձայն  
գտնվում է կենսաթոշակային  
հիմնադրամի տնօրինության  
տակ և նախատեսված է  
կենսաթոշակային  
հիմնադրամի՝ մասնակիցների  
նկատմամբ ունեցած  
պարտավորությունների  
իրականացման համար:

### Կենսաթոշակային պարտավորություններ *Liabilities*

Ֆինանսական  
պարտավորություններ, որ  
կենսաթոշակային  
համակարգը պարտավոր է  
վճարել ներկա պահին կամ  
ինչ-որ ժամանակ հետո,  
ապագայում:

Կենսաթոշակային  
ակտիվների տեղաբաշխումից  
ստացված եկամուտը՝ *Incomes received from distribution of pension assets*

Արժեքավորում, ինչպես նաև  
բանկային ավանդներում  
կենսաթոշակային  
պահուստների  
տեղաբաշխման  
գործառույթներից ստացված  
դիվիդենտներ և  
տոկոսավճարներ,  
ակտիվների վաճառքից  
ստացված մաքուր  
եկամուտներ, որոնք  
արտացոլում են  
կենսաթոշակային  
պահուստների շուկայական  
գնի փոփոխությունը:

Կենսաթոշակային ակտիվների տեղաբաշխումից  
ստացված եկամուտի նվազագույն երաշխավորված չափ  
*Minimal guaranteed rate of income received from distribution of pension assets*

Եկամտի նվազագույն չափ, որ ստացվել է կենսաթոշակային պայմանագրով սահմանված կենսաթոշակային ռեզերվների տեղաբաշխումից և կենսաթոշակային պայմանագրի կիրառության ողջ ընթացքում փոխանցվում է կենսաթոշակային հաշիվներին:

**Կենսաթոշակային սխեմայի փոփոխություն**  
*Change of pension scheme*

Կենսաթոշակային պայմանագրի պայմանների փոփոխություն՝ նախկինում ընտրված կենսաթոշակային համակարգի փոխարեն կենսաթոշակային հիմնադրամի կողմից առաջարկվող այլ կենսաթոշակային համակարգի անցնելու կապակցությամբ:

**Կենսաթոշակային վկայագիր (պոլիս) *Pension policy***

Փաստաթուղթ, որը հաստատում է մասնակցի իրավունքը Հիմնադրամից

պահանջելու իր նկատմամբ կենսաթոշակային պայմանագրով սահմանված պարտավորությունների իրականացումը:

**Կենսաթոշակի վաղ անցում**  
*Early retirement*

Իրավիճակ, երբ անձը որոշում է կենսաթոշակի անցնել սահմանված ժամանակից շուտ և կենսաթոշակային նպաստները ստանալ սովորական կենսաթոշակային տարիքից ավելի վաղ:  
Հարակից հասկացություններ՝ Հետաձգված կենսաթոշակի անցում:

**Կենսաթոշակի ուշ անցում**  
*Late retirement*

Կենսաթոշակային ծրագրի մասնակցի՝ նորմալ կենսաթոշակային տարիքից ավելի ուշ կենսաթոշակի անցնելն ու կենսաթոշակ ստանալը:

**Կենսաթոշակային վաստակներ *Pensionable earnings***

Եկամուտներ, որ սովորաբար օգտագործվում են հաշվարկելու նպաստներն ու արտոնությունները, որոնք ոչ այլ ինչ են, քան կենսաթոշակային ծրագրի մասնակցի ժամանակին ստացած եկամուտները:

#### Կենսաթոշակային տարիք *Retirement age*

Պետության կողմից սահմանված տարիք, որից հետո կարելի հավակնել կենսաթոշակի:

#### Կենսաթոշակի ֆինանսավորում (կուտակում) *Funding*

Կենսաթոշակային ծրագիրը ֆինանսավորելու համար ակտիվների կուտակմանն ուղղված աշխատանք:

#### Կենսաթոշակառու *Pensioner*

Անձ, որն այս պահին հանդիսանում է կենսաթոշակ ստացող:

#### Կենսաթոշակառուի անձնական գործակից *Pensioner personal coefficient*

Կենսաթոշակառուի ունեցած փաստացի աշխատանքային ստաժի տարիների և սահմանված պահանջվող աշխատանքային ստաժի հարաբերցություն. ընդ որում, սահմանված պահանջվող աշխատանքային ստաժը գերազանցող ապահովագրական ստաժի յուրաքանչյուր 1 տարվա գործակիցը սահմանվում է 0,02:

#### Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ *Survivor's benefit*

16/18 տարին չլրացած երեխային վճարվող կենսաթոշակ (նաև ծննդագործկ այն երեխաներին, որոնք ուսանող են), եթե նա կորցրել է ծննդներից մեկին կամ ծննդներից երկուսին էլ:

#### Կյանքի ապահովագրություն *Life insurance*

Ապահովագրական պոլիս, որը կվճարվի կյանքի ապահովագրություն գնած անձի կնոջը կամ ամուսնուն կամ նրա ժառանգներին նրա մահվան դեպքում:

**Կորպորատիվ հոգարածու  
*Corporate trustee***

Որպես հոգարածու գործող ընկերություն:

**Կորպորատիվ ոչ պետական կենսաթոշակ ՝*Corporate non-state pension***

Ոչ պետական կենսաթոշակ, որը ֆինանսավորվում է մասնավոր կենսաթոշակային հիմնադրամում կուտակված միջոցների հաշվին:

**Կենսաթոշակի չափի նվազեցում կենսաթոշակի վաղ անցնելու դեպքում *Abate for early retirement***

Կենսաթոշակի չափի նվազեցում է տեղի ունենում, եթե անձը կենսաթոշակի է

անցնում կենսաթոշակային սահմանված տարիքից շուտ:

**Կուտակային (ֆինանսավորվող) կենսաթոշակային ծրագրեր *Funded pension funds***

Կենսաթոշակային ծրագրեր, որոնք կուտակում են ակտիվներ՝ ծրագրի պարտավորությունները հետագայում կատարելու համար:

Հարակից հասկացություններ՝ Բաշխողական (PAYG) կենսաթոշակային ծրագիր:

**Կուտակված ակտիվներ  
*Accumulated assets***

Կենսաթոշակային հիմնադրամում կուտակված ակտիվների ընդհանուր արժեքը:  
Նմանատիպ հասկացություններ՝ Կուտակված ներդրումներ:

**Կուտակված իրավունքներ  
*Accrued rights***

Նմանատիպ  
հասկացություններ՝  
Կուտակված նպաստներ:

**Կուտակման  
ժամանակահատված**  
*Accumulation period*

Ներդրողի (գործատու,  
աշխատող) կենսաթոշակային  
հաշվի վրա կատարված  
առաջին կենսաթոշակային  
վճարման և մասնակցին  
կուտակային համակարգից  
կենսաթոշակի նշանակման  
միջն լնկած  
ժամանակահատված:

**Կուտակված ներդրումներ**  
*Accumulated contributions*

Կենսաթոշակային ծրագրի  
մասնակցի կողմից վճարված  
բոլոր ներդրումների և այդ  
գումարների վրա հավելյալ  
տոկոսային եկամուտների  
հանրագումարը:

Նմանատիպ  
հասկացություններ՝  
Կուտակված ակտիվներ:

**Կուտակված նպաստներ**  
*Accrued benefits*

Աշխատանքային տարիների  
ընթացքում կենսաթոշակային  
ծրագրի մասնակցի  
կուտակած կենսաթոշակային  
նպաստի չափը:

Նմանատիպ  
հասկացություններ՝  
Կուտակված իրավունքներ:

Հ

## Հավատարմագրային կառավարում *Asset trust management*

Ունեցվածքի լիազոր կառավարման պայմանագրով մի կողմը որոշակի ժամանակահատվածով մյուս կողմի (լիազոր կառավարողի) լիազոր կառավարմանն է տրամադրում իր ունեցվածքը, իսկ մյուս կողմը երաշխավորում է տնօրինել ունեցվածքը՝ ելնելով առաջինիս շահերից: Ունեցվածքի հանձնումը լիազոր տնօրինության չի բերում ունեցվածքի սեփականության իրավունքի փոխանցման լիազոր տնօրինողին:

## Հավելյալ պաշտպանություն *Complementary protection*

Պարտադիր կամ կամավոր հիմունքներով նպաստների ընդհանուր սահմանում՝ բարելավելու սահմանված բազային ծրագրի ապահովումը: Կիրառվում է և՝

բոշակների, և՝ թե առողջապահության ոլորտներում: Կարող է կազմակերպվել սահմանված կարգով, խնճակային կամ անհատական համաձայնագրի շրջանակներում:

## Հավելուրդ *Surplus*

Նմանատիպ հասկացություն՝ Ակտուարական հավելուրդ:

## Հավելյալ բաղադրիչ *Additional component*

Հավելյալ կենսաքոշակի մեկ այլ անվանում:

## Համախառն ներդրումային պորտֆել *Gross investment portfolio*

Կառավարող ընկերության լիազոր դեկավարման տակ գտնվող դրամական միջոցների և արժեթղթերի ամբողջությունը:

## Հավելյալ կենսաքոշակ *Supplementary pension*

**Հավելյալ կենսաթոշակային  
